



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ԱՐԵՎԵԼԵԱՆ ՈՐՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ՇՐՋԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎ



Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու՝ Ղըպտի Ուղղափառ, Ասորի Ուղղափառ եւ Հայց. Առաքելական եկեղեցիներու Արեւմտեան Միացեալ Նահանգներու Առաջնորդները Երեքշաբթի, 13 Սեպտեմբերին ունեցան իրենց հերթական հանդիպումը:

Հանդիպումը տեղի ունեցաւ Էնսինոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ մէջ, հիւրընկալութեամբ

Թեմիս բարեջան Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի:

Առաջնորդ Սրբազան Հօր կ'ընկերանային Զրիստոնեական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչներ՝ Գերպ. Տ. Միւռն Տ. Վրդ. Ազիկեան եւ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան, եւ Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Ռազմիկ Զինյ. Խաչատուրեան:

Առաւօտեան ժամը 11:00ին, Առաջնորդ Սրբազան Հայրը, Գերշ. Տ. Եուճին Արք. Զափլան (Ասորի Ուղղափառ) եւ Գերշ. Տ. Սրապիոն Եպիսկոպոս (Ղըպտի Ուղղափառ), իրենց ընկերակցող եկեղեցական հայրերու մասնակցութեամբ եկեղեցւոյ մէջ կարճ արարողութիւն կատարեցին:

Միացեալ աղօթքէն ետք, Առաջնորդներն ու հոգեւորականաց Դասու անդամներ ունեցան իրենց ժողովը: Չեկոյցներ տրուեցան կիրակնօրեայ դպրոցներու միջ-աշակերտական հաւաքի եւ երիտասարդական կազմերու աշխատանքներուն, ինչպէս նաեւ որոշուեցաւ յառաջիկայ 2012 տարուան միջ-թեմական հոգեւորականաց հաւաքը եւ Սուրբ Պատարագը կատարել Էնսինոյի Ս. Նահատակաց եկեղեցւոյ մէջ: Առաջնորդներու ժողովին, Ս.

Աթոռոյս Գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի հովուապետական մօտալուստ այցելութիւնը մաս կազմեց խորհրդակցութիւններուն:

PRELATE PARTICIPATES IN MEETING OF THE COUNCIL OF ORIENTAL ORTHODOX BISHOPS



On Tuesday, September 13, 2011, the Council of Oriental Orthodox Bishops held their quarterly meeting at Holy Martyrs Church in Encino, hosted by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate.

The day began with a prayer service inside the Church led by the Prelate, H.E. Archbishop Mor Clemis Eugene Kaplan, and H.G. Bishop Serapion, and with the participation of clergy members

from the three Churches.

Very Rev. Fr. Muron Aznikian, Very Rev. Fr. Barthev Gulumian, and Rev. Fr. Razmig Khatchadourian participated in the service and meeting.

Among the items discussed during the meeting were the upcoming Pontifical Visit of H.H. Catholicos Aram I, next year's joint Divine Liturgy which will be held on April 26, 2011 at Holy Martyrs Church, and youth and Sunday School joint activities.